

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2018 թ. դեկտեմբերի 3-ին կայացած թիվ 6 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին ներկա էին 33-ը:

Նիստին ներկա էր ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր՝ ակադեմիկոս Գ.Գ.Գևորգյանը

Օրակարգում՝

- Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը
- Ուսումնական ձեռնարկի /գրքի/ տպագրման երաշխավորման հարցը՝ Ա. Ն. Թռչունյան «Կենսաէներգետիկա» դասագիրք

ԵՊՀ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լսեցին՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանի (01.01.2018թ – 31.12.2018թ) հաշվետվությունը:

Հարգելի գործընկերներ.

1. Ընդհանուր տեղեկություններ ֆակուլտետի վերաբերյալ

Նախ ուսանողների թվաքանակի մասին: Ներկայումս՝ 2018/19թթ ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում ունի 471 ուսանող. ընդ որում՝ առկա համակարգի բակալավրիատում՝ 319, մագիստրատուրայում՝ 96, իսկ հեռակա համակարգի բակալավրիատում՝ 56 ուսանող /պատկեր 1/: Համեմատելով ուսանողների այս թվաքանակը վերջին երկու ուս.տարիների թվաքանակի հետ (2017/18թթ ուստարում՝ 526, 2016/17թթ ուստարում՝ 522, պատկեր 2) համոզվում ենք, որ վերջին տարիներին դիտվող համալսարան ընդունված ուսանողների թվաքանակի փոփոխությունները, ինչը ընդհանուր առմամբ նվազում է արձանագրում, համապատասխանաբար ազդում է նաև մեր ֆակուլտետ ընդունված ուսանողության ընդհանուր քանակի վրա: /պատկեր 3/: Սա հատկապես դրսևորվեց այս տարվա

ընդունելության արդյունքներում: Հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակի էապես նվազումը բերեց մեր համալսարան ընդունված ուսանողների զգալի նվազման (նախատեսված տեղերի գրեթե 42%-ով), ինչը մեր ֆակուլտետում կազմեց նույնիսկ 48%: Արդյունքում, համալսարանի 52 մասնագիտությունների մեծ մասի գծով չլրացվեցին հայտարարված բոլոր տեղերը /նույնիսկ՝ պետպատվերի/, իսկ մի քանի մասնագիտություններ ուղղակի չլրացվեցին: Ցավոք, դրանց թվում էր նաև մեր երեք մասնագիտություններից մեկը՝ «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությունը: Այս հարցում, բացասական օբյեկտիվ հանգամանքներից բացի կա նաև ավագ դպրոցի բնագիտական հոսքերի հետ կապված խնդիր, որի մասին նշել էի անցյալ տարվա հաշվետվության մեջ և որի մասին տեղեկացրել էի մեր նախկին նախարարին, բայց երկրում տեղի ունեցած քաղաքական բուռն իրադարձությունները հետին պլան մղեցին այս հարցի լուծումը ևս: Կարծում եմ 2019-ին հարցը կրկին կբարձրացնենք: Պետք է հասնել նրան, որ ավագ դպրոցում գործի մեկ բնագիտական հոսք՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների համահավասար ժամաքանակի դասընթացներով: Եվ թող երեխան որոշի, թե որ առարկաներին կամ առարկաների գույզին է տալիս գերակայություն:

Վերադառնամ հաշվետվությանը: Ֆակուլտետի ուսանողության վերը նշված թվաքանակին եթե ավելացնենք նաև առկա և հեռակա ուսուցմամբ մոտ երկու տասնյակի հասնող ասպիրանտների թիվը, ապա կարելի է փաստել, որ վերջին երեք ուստարիների ընթացքում ֆակուլտետը սովորողների թվաքանակի էական փոփոխություններ չի արձանագրում. Սովորողների թիվն այսօր 500-ի սահմաններում է: Սա վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք օբյեկտիվ դժվարությունները, որոնք առկա են հանրապետությունում դեմոգրաֆիկ իրադրության և բնագիտական մասնագիտությունների նկատմամբ, ընդհանուր առմամբ, հետաքրքրության նվազման առումով:

2. Ուսումնական աշխատանքներ

Ֆակուլտետի ուսումնական գործընթացները հաշվետու տարում ևս ընթացել են բնականոն հունով, առանց արտակարգ միջադեպերի: Հաշվետու տարում շարունակվել է ֆակուլտետի դասախոսական անձնակազմի երիտասարդացման գործընթացը: Մենք հեռացել ենք այն տարիներից, երբ մեր ֆակուլտետը տարիներ շարունակ վերջին տեղում էր գտնվում մեծահասակ պրոֆեսորադասախոսական կազմի առումով: Կարող ենք արձանագրել, որ ներկայումս այս առումով մենք առանձնապես անհանգստանալու պատճառներ այլևս չունենք: Յոթ ամբիոնների վարիչների, երկու գիտակրթական կենտրոնների ղեկավարների մեծ մասը երիտասար և միջին տարիքի հայտնի մասնագետներ են, ավելանում է երիտասարդ դասախոսների քանակը: Տրամաբանական է, որ երիտասարդ ղեկավարների

առկայությունն, իհարկե, նպաստելու է ֆակուլտետի դասախոսական և գիտական անձնակազմերի հետագա երիտասարդացմանը:

Նշվեց, որ ֆակուլտետի ուսանողների թվաքանակը մեծ չէ, և էլ ավելի ցավալի է նրանց մի ստվար հատվածի գիտելիքների չափազանց ցածր մակարդակը: Դրա պատճառները տարբեր են: Կարծում եմ, որ դրանց թվում գլխավոր պատճառները երկուսն են՝ □ ֆակուլտետ ընդունվող ուսանողների հանրակրթական ցածր մակարդակը և նրանց մեծ մասի պատշաճ գիտելիքներ ձեռքբերելու ցանկության բացակայությունը, մոտիվացիայի բացակայությունը: Այլապես անհնար է բացատրել մեր շրջանավարտների մեծ մասի գիտելիքների աղքատիկ մակարդակը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակներում, երբ ցանկացած դասընթացի վերաբերող գիտաուսումնական ինֆորմացիայի կարելի է համացանցի միջոցով հեշտությամբ իրազեկվել, երբ ֆակուլտետի գիտատեխնիկական հնարավորությունները երբևէ այսքան բարվոք չեն եղել ինչպես ներկայում, երբ ֆակուլտետում գործում են սարքավորումներով հագեցած գիտակրթական կենտրոններ, գործում է գիտահետազոտական ինստիտուտ, բարձրորակ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմ, ուսանողների և, հատկապես մագիստրանտների մի մասի, աղքատիկ գիտելիքներն անհնար է արդարացնել կամ հանդուժել: Ցավոք, այս տարի ևս գոհ չենք ուսանողների մի ստվար հատվածի գիտելիքներից: Արդեն սովորական է դարձել, որ ցանկացած կուրսում գիտելիք ստանալու ցանկություն (մոզը 13-ից բարձր) դրսևորվում է բակալավրիատի ուսանողների միայն կեսի մոտ, մնացածներն իրենց բավարար գնահատականները ձեռք են բերում դասախոսական անձնակազմի, շատ դեպքերում, չափից ավելի հանդուրժողականության շնորհիվ: Եվ նույնիսկ նման իրադրությունում անցյալ ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետից հեռացվել են /իհարկե, տարբեր պատճառներով/ 14 ուսանող, ֆակուլտետ են տեղափոխվել 7 ուսանող:

Պատկերում բերված է ֆակուլտետի երեք մասնագիտություններում մասնագիտացող ուսանողների թվաքանակը բակալավրիատի առկա և հեռակա բաժիններում և նրանց ընդհանուր քանակը մագիստրատուրայում: Բակալավրիատի ուսանողների մոտ 43,3%-ը կենսաբանություն մասնագիտությամբ սովորողներն են, 26,5%-ը՝ կենսաքիմիայի և 9,8%-ը՝ կենսաֆիզիկա-կենսաինֆորմատիկայի, իսկ 20,4%-ը՝ մագիստրանտներն են:

Գերազանց առաջադիմություն (մոզը 18-ից բարձր) հաշվետու տարում ունեցել են բակալավրիատի առկա համակարգի ուսանողների միայն 6,9%-ը (նախորդ երկու ուսումնական տարիներում եղել է համապատասխանաբար 7,1% և 7%), այսինքն տատանումների սահմանները բնականոն են: Մագիստրատուրայում անցյալ տարվա համեմատությամբ պատկերն էապես բարելավվել է՝ 32,3% (անցյալ տարի՝ 66%, դրանից առաջ՝ մոտ 30%): Հուսանք, որ այս միտումը կշարունակվի:

Կրթության պատշաճ որակի ապահովումը մեր առջև ծառայած կարևորագույն խնդիրն է: Մենք ունենք առանձին փայլուն ուսանողներ թե՛ բակալավրիատի կուրսերում, և թե՛ մագիստրատուրայում: Սակայն ցավոք տեսնում ենք, որ ընդհանուր

առմամբ ուսանողների կրթական միջին մակարդակը տարեցտարի անկում է ապրում: Կրթության որակի վրա ազդող տարաբնույթ գործոնների մասին հաշվետվություններում շատ ենք նշել:

Որակի ապահովումը կախված է նաև գիտելիքն ընկալելու ուսանողների ունակությունից և, հատկապես, ցանկությունից: Ցավոք, նման ցանկություն տեսնում ենք փոքրաթիվ ուսանողների մոտ: Մեզնից պահանջվում է կրթական համակարգում նորանոր մոտեցումներ կիրառել, մասնագիտական հետաքրքրություններին նպաստող գիտական ժամանակակից գիտելիքներ ուսանողներին հրամցնել, ընդ որում սկսել հանրակրթական դպրոցից: Հաշվետու տարում շարունակվել են մեր մասնագետների պարբերաբար այցելությունները Երևանի և մարզերի ավագ դպրոցներ, նրանց կողմից մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ զեկույցների, դասախոսությունների անցկացումը: Պարբերաբար են դարձել նաև տարբեր դպրոցների աշակերտների այցելությունները՝ հատկապես ֆակուլտետի նախկին շրջանավարտ-ուսուցիչների ղեկավարությամբ: Ներկա ուսումնական տարվա առաջին կիսամյակում մեկ աշխատանքային օր նվիրեցինք ֆակուլտետում Երևանի ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտության հետ հանդիպմանը:

Գիտակրթական գործունեության պատշաճ մակարդակի ապահովման գործին լծված է ֆակուլտետի ողջ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը: Այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոս (որոնցից 2-ը՝ հրավիրված համատեղողներ են) և 3 թղթակից անդամներ, գիտությունների 18 դոկտոր և ավելի քան 90 թեկնածուներ: Այս պատկառելի գիտակրթական հանրույթը ներկայացված է ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներում՝ 7 ամբիոններում, ֆակուլտետում գործող «Կենսաբանության» ինստիտուտի 9 լաբորատորիաներում և 2 գիտակրթական կենտրոններում՝ «Կիրառական կենսաբանության» գերազանցության կենտրոնում և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի» նորարարական կենտրոնում:

Գիտակրթական գործունեության բարելավմանը նպաստում է նաև միջամբիոնային, միջֆակուլտետային նոր հնչեղություն ունեցող մասնագիտացումների բացումը: Հաշվետու տարում հաջողությամբ շարունակվեց համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացումը մեր ֆակուլտետի վեց ամբիոններում՝ դեղագործության հարակից թեմաների ուղղությամբ: Հուսով ենք, որ այս երկուստեղ ձեռնտու համագործակցությունը կշարունակվի ապագայում:

Մագիստրոսական կրթության բարելավման գործում կարևոր են համարում նաև մագիստրոսական ծրագրերի լրամշակման, նոր կրթական ծրագրերի առաջարկման գործընթացը: Հաշվետու տարում այդ ուղղությամբ նույնպես աշխատանքներ կատարվեցին: Մասնավորապես, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կողմից մշակվեց ևս մեկ, նոր

մագիստրոսական ծրագիր՝ Կիրառական մանրէաբանությունը, որը, հուսով ենք, հետաքրքրություն կառաջացնի ուսանողության շրջանում:

Գաղտնիք չէ, որ կրթության պատշաճ որակի ապահովման գործում կարևոր է նաև ֆակուլտետի ուսումնաստեխնիկական բազան, արդի սարքավորումների, բարձրորակ ռեակտիվների առկայությունը: Ֆակուլտետում դրանց ձեռքբերման տարբեր աղբյուրներ կան. Դրանք են՝ ԵՊՀ-ից ֆակուլտետին հատկացվող փոքրածավալ գումարը (տարեկան 1.650.000 դրամ, որի մեջ մտնում են գրասենյակային ծախսերը, գործուղման, ծառայությունների ձեռքբերման և այլ ծախսերը), ԳՊԿ-ից բազային ֆինանսավորում ստացող գիտական լաբորատորիաների ֆինանսները, թեմատիկ ֆինանսավորման նախագծերի և այլ միջպետական (հայ-ռուսական, հայ-բելոռուսական և այլ նախագծերի) ֆինանսները և, վերջապես, միջազգային դրամաշնորհներից ստացվող գումարները:

Պատկերում բերված է ՀՀ ԳՊԿ-ի կողմից բազային և թեմատիկ ֆինանսավորումով, ինչպես նաև միջազգային դրամաշնորհներով ֆինանսավորումով թեմաների քանակը: Ամբիոններից բոլորից մեծ թվով թեմաներ իրականացվում են կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում (17) և կենդանաբանության ամբիոնում (14):

Ուրախալի է, որ հաշվետու տարում ֆակուլտետի շատ ամբիոններ արժանացել են տարաբնույթ միջազգային դրամաշնորհների, որոնց ֆինանսավորման մի մասն օգտագործվել է սարքավորումներ և ռեակտիվներ ձեռքբերելու համար: Հաշվետու տարում ֆակուլտետի ամբիոններն ունեցել են ընդհանուր առմամբ 170,65 մլն ՀՀ դրամ կամ մոտ 355.500 ԱՄՆ դոլար արտաբյուջետային ֆինանսավորում: Այս ցուցանիշը փաստորեն վերաբերում է չորս ամբիոնի՝ Էկոլոգիայի և բնության պահպանության (61,4 մլն դրամ), Կենդանաբանության (56,5 մլն դրամ), Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի (24,0 մլն դրամ) և Գենետիկայի և բջջաբանության (18,65 մլն դրամ) ամբիոններին, որոնց ֆինանսավորումը միասին կազմում է ֆակուլտետի արտաբյուջետային ֆինանսավորման 94%-ը: Ցավոք, մյուս երեք ամբիոններն այս առումով շատ հետ են: Բնական է, որ նշված գիտակրթական միջազգային դրամաշնորհների ֆինանսավորման առկայությունը ֆակուլտետում, ՀՀ Գիտության պետական կոմիտեի բազային և թեմատիկ ֆինանսավորման հետ մեկտեղ, էապես նպաստում է նյութատեխնիկական բազայի համալրմանը, կրթական գործընթացների բարելավմանը ֆակուլտետում:

Ֆակուլտետի ուսումնական տարածքների քանակն ու վիճակը, ընդհանուր առմամբ, բավարար են և նպաստել են ուսումնական գործընթացների բարեհաջող անցկացմանը: Այնուամենայնիվ, այստեղ էլ ունենք թերացումներ՝ ցավոք, դեռևս չի վերանորոգվել մասնաշենքի վերջին հարկի սենյակների մի մասը անցյալ սեզոնի ձնհալից հետո: Թվում է, սպասում ենք այս ձմռան ձնհալին, որպեսզի վերանորոգմանն ուղղված կրկնակի ֆինանսներ չծախսենք: Դեռևս լուծված չէ համակարգչային պրոյեկտորների լսարաններում տեղադրման հարցը, թեև երկու

լսարանում տեղադրել ենք հեռուստատեսային մոնիտորներ, որոնք ակտիվ օգտագործվում են դասախոսությունների ժամանակ: Հեռուստացույց է տեղադրվել նաև կենդանաբանության ամբիոնի միջանցքում՝ ամբիոնի վերաբերյալ գիտակրթական բնույթի տեղեկատվություն ընձեռելու, կենդանաբանության բնագավառի նորությունների գովազդման համար: Ցավոք, այն դեռևս չի գործում՝ հուսանք, որ շուտով կգործի:

Հաշվետու տարում մասնաշենքի երկրորդ և երրորդ հարկերի միջանքում տեղադրվեցին ֆակուլտետի նախկին շրջանավարտներ, երևելի գիտնականներ, ԽՍՀՄ և Հայաստանի ԳԱ ակադեմիկոսներ Արմեն Թախտաջյանի, Միքայել Չայլախյանի, Էզրաս Հասրաթյանի, Հրայր Բունիաթյանի և պրոֆեսոր Հրանտ Բատիկյանի կիսանդրիները: Թեև կիսանդրիների հանդիսավոր բացումը դեռևս առջևում է (այն, ինչպես գիտեք, Երևանի պետական համալսարանի 100-ամյա հոբելյանի հանդիսությունների շարքում է), այսօր արդեն այդ կիսանդրիները մեծ շուք են տալիս մասնաշենքի ինտերիերին:

Ինչպես միշտ, հաշվետու տարվա ընթացքում էլ, ուսումնական գործընթացների կազմակերպումը ֆակուլտետում պրոբլեմներ չի հարուցել շնորհիվ դեկանատի աշխատակիցների՝ դեկանի տեղակալներ Կարեն Ղազարյանի, Հենրիկ Մեմերջյանի, ֆակուլտետի խորհրդի գիտքարտուղար Աննա Կարապետյանի, ինչպես նաև Ռուզան Յորդանյանի և Մարջան Գևորգյանի պատասխանատու աշխատանքի, ում ես հայտնում եմ շնորհակալություն բարեխիղճ աշխատանքի համար: Ուսումնական գործընթացների բարելավման գործում որոշակի դեր ունեն նաև ֆակուլտետի կուրատոր-դասախոսները, ինչպես նաև մեր ուսանողները, ովքեր անանուն սոցիոլոգիական հարցումների ժամանակ, որոշ դեպքերում, բարձրացնում են կարևոր հարցեր: Ուսանողների բարձրացրած հարցերին, իհարկե, աշխատում ենք ականջալուր լինել:

Մեր ֆակուլտետի ուսումնական գործընթացներում մեծ է ուսումնական պրակտիկաների դերը: Հաշվետու տարում, ինչպես միշտ, դաշտային, փորձարարական և մանկավարժական պրակտիկաները, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով: Ուրախությամբ պիտի նշեմ, որ հաշվետու տարում յուրօրինակ դրական լուծում ստացավ դաշտային պրակտիկայի անցկացման վայրի հարցը: Չակնկալելով Հանքավանի հանգրվանի պայմանների բարելավում մոտ ապագայում, ռեկտորատը վերջապես ճիշտ որոշում ընդունեց՝ պրակտիկան անցկացնել համալսարանի Ծաղկաձորի հանգրվանում՝ զուգակցելով ուսանողների ավտոբուսային այցելությունները նաև Հանքավանի բազայի տարածք: Հատկանշական է, որ այս նորությունն արժանացավ թե դասախոսների և թե, հատկապես, ուսանողության ջերմ հավանությանը:

Ամենամյա նորոգման կարիք ունի համալսարանի տարածքում գտնվող ջերմոցը, որն օգտագործվում է ֆակուլտետի ամբիոնների կողմից ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինչպես նաև աշխատակիցների գիտական թեմաների կատարման համար: Ինչպես նշում եմ

վերջին տարիների հաշվետվություններում, այստեղ վերանորոգման աշխատանքներ տարվում են դեպքից դեպք, և դեռևս բավական գործ կա անելու: Հարցեր են կուտակվել նաև ֆակուլտետի մասնաշենքի տանիքի տարածքի մի մասում գտնվող կենդանիների բուծարանում: Թեև այն վերանորոգված է, սակայն չունի հնարավորություններ՝ հատուկ փորձասեղաններ և այլ պարագաներ, ինչը կապահովեր բուծարանի լիարժեք օգտագործումը: Հուսանք, որ տարիների ընթացքում բարձրացվող այս հարցերը կստանան դրական լուծում մոտ ապագայում, մանավանդ որ հնարավոր է նաև դեղագետ-գործընկերներն օգտվեն մեր կենդանանոցից:

3. Գիտական աշխատանքներ

Հարգելի գործընկերներ. Բոլորիս հայտնի է, որ ֆակուլտետի գիտահետազոտական գործունեությունը գրեթե ամբողջությամբ իրականացվում է ֆակուլտետում գործող “Կենսաբանության” գիտահետազոտական ինստիտուտի շրջանակներում: Ինստիտուտը, լինելով ներֆակուլտետային կառույց և անքակտելի կապերով միահյուսված լինելով ամբիոնների հետ, ֆակուլտետում իրականացվող ուսումնական գործընթացների հետ, ունենալով համատեղությամբ գործող մեծ թվով դասախոս-աշխատակիցներ և համատեղ օգտագործվող նյութատեխնիկական բազա, մինևույն ժամանակ բավական ինքնուրույն կառույց է իր տնօրինությամբ, Գիտական խորհրդով և իր յուրահատուկ գործառույթներով: Այնպես որ, ինչպես միշտ նշում եմ վերջին տարիների հաշվետվություններում, ֆակուլտետի գիտական աշխատանքների առավել մանրակրկիտ հաշվետվություն պետք է ակընկալել ինստիտուտի տնօրենի զեկույցում, ինչը, կարծում եմ կկայանա որոշ ժամանակ անց: Ես այսօր հպանցիկ կներկայացնեմ ֆակուլտետի գիտական գործունեության միայն որոշ, իմ կարծիքով առավել կարևոր և ընդհանրական պատկերը:

Նախ նշեմ, որ հաշվետու տարում, ինչպես վերջին տասնամյակի ընթացքում, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանի հատկապես հրատարակումների քանակության և նաև որակի առումով: Վերջին տարիներին այս տեսակետից ֆակուլտետն եղել է առաջատարը համալսարանի մաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների մեջ (վերջին 5 տարում միայն մեկ անգամ է զիջել ֆիզիկայի ֆակուլտետին): Հաշվետու տարին հրատարակումների ընդհանուր թվաքանակով (248) արձանագրում է գրեթե նույն ցուցանիշը, ինչ նախորդ տարիներին (234՝ անցյալ տարվա ցուցանիշն էր, 272՝ նախանցյալ տարվա): Համոզված եմ՝ կմնանք համալսարանի առաջատարների թվում: Հաշվետու տարում մեր աշխատակիցները հրատարակել են գիտական 138 հոդված, որոնց 46%-ը՝ Հայաստանից դուրս, մասնակցել են մեծ թվով գիտաժողովների՝ հրատարակելով 104

գիտական թեզիսներ, տարաբնույթ միջազգային և հայրենական գիտաժողովներում, հրատարակել են նաև 4 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ և 2 մենագրություն: Աղյուսակում բերված է տարբեր ամբիոնների ներդրումը: Այստեղ տեսնում ենք, որ առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է՝ 68 հրատարակում, այնուհետև գալիս են կենսաֆիզիկայի (41), կենդանաբանության (37), բուսաբանության և սնկաբանության(37) ամբիոնները: Ուրախալի է կենդանաբանության ամբիոնի առաջընթացը՝ անցյալ տարվա 10 հրատարակումների դիմաց 37 հրատարակումներ, այդ թվում 26 գիտական հոդվածներ՝ մեծամասնությունը Հայաստանից դուրս հրատարակված: Բնական է, որ հոդվածների գիտական մակարդակի որոշիչը հրատարակումն է միջազգային հեղինակավոր ամսագրերում: Այս առումով, կարծեք թե, վիճակը բարվոք է, եթե նկատի ունենանք, որ հաշվետու տարում ֆակուլտետի կողմից ՀՀ ԳՊԿ-ի թեմատիկ ֆինանսավորման մրցույթում, որտեղ գերակայություն տրվում է արտասահմանյան ամսագրերում հրատարակումներին, ներկայացրած 9 նախագծերից հաղթեցին 8-ը!

Հարյուրից ավելի միջազգային գիտաժողովներին մասնակցությունն իրականացվել է հիմնականում գիտական գործուղումների արդյունքում, որոնց ճնշող մեծամասնությունը (90%-ից ավելին) իրականացվել է արտաբյուջետային ֆինանսավորման հաշվին: Հաշվետու տարում մեր մասնագետները եղել են 99 գործուղումներում, 18-ը՝ երկարաժամկետ և 81-ը՝ կարճաժամկետ: Այստեղ, ինչպես և նախորդ տարիներին, առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է (գործուղումների կեսից ավելին): Ուրախալի է, որ գործուղվել են նաև ուսանողներ, ասպիրանտներ, երիտասարդ գիտնականներ (գործուղումների ընդհանուր թվի 1/3-ից ավելի):

Տակուլտետի աշխատակիցների գիտական հաջողությունների մասին են վկայում նաև միջազգային գիտական համագործակցության շրջանակում անցյալ տարի կազմակերպված միջազգային գիտաուսումնական լաբորատորիաները: Մասնավորապես՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի մասնագետների, Ռուսաստանի Դաշնության Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի և Նիդեռլանդների Քրոնինգենի Կիրառական գիտությունների Հանգե համալսարանի կլանքի մասին գիտության և տեխնոլոգիայի ինստիտուտի մասնագետների հետ համատեղ լաբորատորիան, ինչպես նաև Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի մասնագետների մոլեկուլային բջջագենետիկայի բնագավառում գիտակրթական ծրագրերի մշակման նպատակով ստեղծված «Քրիստոֆ Թերզիանի անվան հայ-գերմանական համատեղ գիտահետազոտական լաբորատորիան»: Անշուշտ, նմանատիպ միջազգային գիտական կառույցները նպաստում են գիտական համագործակցությանը, փոխադարձ գործուղումներին, երիտասարդ մասնագետների գիտակրթական մակարդակի բարձրացմանը: Դրանք կարևոր են նաև գիտակրթական նոր ծրագրերի մշակման նպատակով: Համատեղ գործող միջազգային լաբորատորիաները կարևոր

են նաև ամբիոնների նյութատեխնիկական բազայի հարստացման առումով: Նմանատիպ լաբորատորիաների աշխատանքների մասին առավել մանրակրկիտ տեղեկատվություն ակնկալում ենք Կենսաբանության գ/հ ինստիտուտի տնօրենի հաշվետվությունում:

Ի մի բերելով նշեմ, որ հաշվետու տարում շարունակվել են արտասահմանյան գիտնականների այցելությունները, գիտական զեկույցները դասախոսությունները, ինչը վկայում է ֆակուլտետի, հատկապես Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի, Գենետիկայի և բջջաբանության, Էկոլոգիայի և բնության պահպանության, Կենդանաբանության ամբիոնների մասնագետների միջազգային համագործակցության ասպարեզում առաջընթացի մասին:

4. Ֆակուլտետի գործունեության այլ բնագավառներ

Հաշվետու տարում շարունակվել է ֆակուլտետի բնական գործունեությունը նաև այլ բնագավառներում: Ինչպես և վերջին տարիներին, դրական կարելի է համարել ֆակուլտետի Գիտխորհրդի (գիտքարտուղար՝ դոցենտ Աննա Կարապետյան), ֆակուլտետի Արհբյուրոյի (նախագահ՝ դոցենտ Մեղորա Խաչատրյան) գործունեությունը: Ֆակուլտետի Արհբյուրոն առավել կարիքավոր աշխատակիցներին նպաստներ են տրամադրել, տարբեր բարեգործական ֆոնդերից առավել բարձր առաջադիմություն ունեցող կարիքավոր ուսանողների մի մասին տվել է միանվագ օգնություն: Աշխատակիցները հնարավորություն են ունեցել իրենց հանգիստն անցկացնելու համալսարանի ծաղկաձորյան հանգրվանում՝ ձեռք բերելով զեղչ գներով ուղեգրեր: Օգտվելով առիթից, ուզում եմ շնորհակալություն հայտնել Արհբյուրոյի նախագահ դոցենտ Մեղորա Խաչատրյանին իր երկարամյա և անձնուրաց գործունեության համար և հուսալ, որ Արհբյուրոն նորընտիր նախագահ դոցենտ Մեղա Մարությանի ղեկավարությամբ հաջողությամբ կշարունակի իր գործունեությունը:

Ֆակուլտետի ղեկնաատն անմիջական կապի մեջ է եղել ֆակուլտետի Ուսանողական խորհրդի հետ, անհրաժեշտության դեպքերում օժանդակել խորհրդի նախաձեռնություններին՝ ուսանողական ցերեկույթներ, հավաքներ կազմակերպելու և այլ գործերում: Գտնում եմ, որ հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, թե Ուսխորհրդի, և թե ուսանողական գիտական ընկերության աշխատանքը դրական պիտի համարել:

Գիտք, որ վերջին տարիներին պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեության արդյունքների հիման վրա հավելավճարի հատկացման էապես նոր համակարգեր են կիրառվում: Հաշվետու տարում կիրառված համակարգն ունի առավելություններ նախորդ տարիներում կիրառվածից: Կարծում ենք, որ այն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի, և հուսով ենք, որ հաջորդ համակարգն ավելի օբյեկտիվ կլինի նախորդից, և տրամադրվելիք

հավելավճարի չափը օբյեկտիվորեն կորոշվի այս կամ այն դասախոսի կամ գիտաշխատողի գործունեության արդյունավետությամբ:

Հաշվետու տարում շարունակվել է 2011 թվականի սեպտեմբերից սկսված ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա ծրագիրը: Մեր ֆակուլտետն ինչպես միշտ, այնպես էլ հաշվետու տարում ակտիվորեն ներգրավված է եղել այդ գործընթացներում:

5. Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի կատարում

Հարգելի գործընկերներ, գիտեք, որ հաշվետու տարում շարունակվել է ԵՊՀ զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագիրը, որի շրջանակներում, բնականաբար, ուրվագծվել են նաև մեր ֆակուլտետի զարգացման հիմնական ուղիներն ու գործունեության գերակայությունները: Ավարտվել է ծրագրի երրորդ տարին և կարող ենք հաշվետու լինել 2018 թվականի որոշ աշխատանքների կատարման առումով: Դրանց մի մասի վերաբերյալ ասվեց հաշվետվության մեջ:

Ցավոք, կան գործողություններ , որոնք չեն իրականացվել կամ կատարվել են թերացումներով: Ռազմավարական ծրագրի չիրականացված գործողությունների մի մասը պայմանավորված է համահամալսարանական խնդիրներով (համապատասխան նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների բացակայություն), մի մասն էլ մեր, ներֆակուլտետային բնույթ ունեն: Հուսով ենք, գալիք՝ ռազմավարական ծրագրի չորրորդ, տարվա ընթացքում երրորդ տարվա թերացումները կշտկվեն: Ծրագրի չորրորդ տարվա հիմնական գործողությունները ներկայացվել են իմ կողմից դեկանի ընտրությանը նվիրված Գիտխորհրդի նիստում, երկու ամիս առաջ, այնպես որ այսօր դրանց վրա կանգ չեմ առնի:

Թերևս այսքանը. այս տարի նույնպես զեկուցումս ծավալուն ստացվեց: Բանն այն է, որ քիչ չեն կատարված աշխատանքները, քիչ չեն նաև թերացումները: Ինչնիցե, պիտի նշեմ, որ ֆակուլտետում կատարված աշխատանքները ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ինստիտուտի, կենտրոնների գիտաշխատողների, դեկանատի և ընդհանրապես, ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և ուսանողության համատեղ, նպատակամղված գործունեության արդյունք են: Հայտնում եմ նրանց բոլորին իմ խորին շնորհակալությունը, հավաստիացնում, որ կենսաբանության ֆակուլտետը այսուհետ ևս կպահպանի իր բարձր վարկանիշը:

Շնորհակալություն ուշադրության համար:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ռ.Ս. Հարությունյանը, «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Ա.Հ. Եսայանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ. Նանագյուլյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա.Հ. Թռչունյանը, ուսանողական խորհրդի անդամ Լ. Բաղդասարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ պրոֆ. Է.Ս. Գևորգյանը բավականին մանրամասն ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետում հաշվետու ժամանակահատվածում կատարված բոլոր աշխատանքները և շնորհակալություն հայտնեցին դեկանին և դեկանատի աշխատակիցներին բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար:

Ելույթներից հետո հնչած հարցերին պատասխանեց գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր՝ ակադեմիկոս Գ.Գ.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հավանություն տալ վերջին տարվա ընթացքում կենսաբանության ֆակուլտետում կատարված աշխատանքներին և դեկանի աշխատանքը գնահատել բավարար:


ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ներկայացրած Ա.Հ. Թռչունյանի «Կենսաէներգետիկա» դասագրքի հրատարակման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել «Կենսաէներգետիկա» դասագիրքը հրատարակման:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է. Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան